

Նրա մէջ և էլ վտանգաւոր վարակող նիւթ չէ ներկայացնում:

Այն քաղաքային գումարները որոնց այժմ մենք ապարդիւն կերպով ծախսում ենք առողջական մասնաժողովի և պ. պ. սանիտարների ուժերի վրա, եթէ առաջ գործ դնէինք ամբողջ քաղաքում անմաքրութիւնների համար ստորերկրեայ խողովակներ չենելու, վաղուց է որ թիֆլիսը կունենար կանաչ և զաւարի աչի մի ընդարձակ սիւստմը:

Ուսաց առածը ասում է՝ «մինչև որ որոտը չորոտայ, ուսմիլը խաչ չի հանի»:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ գրում են Հ. Բ. ՄԱՅԱՆՔԻՍԻՍ-ը որ այնտեղի բնակիչները անհամբերութեամբ սպասում են այն օրվան, որ Բայազէթը վերջնական կերպով կը միանայ Ռուսաստանի հետ: Քաղաքում սացվող մի օրինակ «Մշակը» ոչ թէ միայն կարդացվում է հրապարակներում, որտեղ բնակիչները ժողովում են, այլ և այդ ժողովներից յետոյ տանից տուն են տանում համար և վերջը պատահում են հասցնում են տիրոջը:

Վրաց «Գրոթա» լրագրում կարդում ենք, որ ԲՈՒԹԱՅԻՍԻ նահանգում անասունների ցաւ կայ: Այն գիւղացիները, որոնք 5-10 զոյգ կենդանիներ ունեն, այժմ հազիւ մէկ զոյգ ունեն: Բնակիչները այդ կորուստից յետոյ մեծ թշուառութեան մէջ են:

Վրաց «Գրոթա» լրագրի № 50 և 52 մէջ «Նոր միացում» վրաստան» վերնագրով մի յոգուած կար, որտեղ հեղինակը ուրախանալով թիւրքաց վրաստանի Ռուսաստանի հետ միանալուն, ցանկանում է, որ վրացիք աշխատեն մօտենալ իրանց օտարացած եղբայրակիցներին: Լրագրի կարծիքով պէտք է նոր միացումը երկրում բաց անել ժողովրդական ուսումնարաններ, ծանօթանալ նրանց ժողովրդական գրականութեան հետ և վրաց գրականութեան հետ ծա-

անընդունակութիւնը, որ իրանց ձեռքում ունենալով թաղութական բեմը, լրագրութիւնը և դպրոցները, դարձեալ չը կարողացան մի հաստատուն հող պատրաստել, որի վրա ոտը դնելով վեր բարձրանար թիւրքիայի հայը իր ընկած դրութենից...

Բայց կայ և մի ժողովրդական տարր, որ ներկայացնում է մշակ դասը: Իրանք ըստ մեծի մասով Հայաստանից եկած գաղթականներն են, որ մայրաքաղաքում կատարում են համալի, թուղումը և շօ փշի, ջրկիրի, դայրկի և ուրիշ շատ ստոր ծառայութիւններ: Հայրենիքից հեռացած, այդ պանդուխտ հերոսներն են, որ ամեն անգամ մի ազգային ծանր հարց բարձրանալիս, չը վապատում են պատրիարքարանի չորս կողմը, զրներ և պատուհաններ են փչում, աղմուկ բարձրացնում և արդարութիւն են խնդում, Այս թշուառ մշակները հայրենիքից դուրս աղքատութեան հետ բերել են իրանց սրտի մէջ խորին վէրքեր, որ գործել է մահմետականի բռնակալ ձեռքը և այս պատճառով նրանց աւելի զգալի է թիւրքերի անտանելի լուծը: Եւ ամեն բան կորցրած լինելով,—տուն, տեղ, հայրենիք,—նրանք այլ ևս ոչինչ կորցնելու չունեն, և առանց երկիւղի բողբ են բարձրացնում, ու իրանց թշուառ, անտէր ընտանիքների համար ազատութիւն են խնդրում, պատրիարքի օձիքից բռնելով...

*

«Մշակը» վերջին համարներից երևաց, որ Կ.

նօթագրել նրանց: Այդ մի ազգի անջատված, որդիների միմիանց մօտենալու համար երկու միջոց է ցոյց տալի «Գրոթան», որոնք ունումնարանները և գրականութիւն են:

«Сѣверн. Вѣстн.» լրագրը հաղորդում է, որ օրերումս եկել է Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ թիւրքաց հայերի հաւատարմատար Բեչիկթաշի արքեպիսկոպոս Խորէն Նարէյ, որին թիւրքաբնակ հայերը յանձնարարութիւններ են արել: Սրբազան Խորէնը, աւելացնում է լրագրը, Կ. Պօլսի հայոց ազգային ժողովի նշանաւոր անդամներից մէկն է: Նա վերջին ժամանակներում հայոց ազգային ժողովում բողբեց ջրխառնեանից զինուորներ հաւաքելու մասին թիւրքաց կառավարութեան պահանջի դէմ: Կիրակի օրը սրբազանը, Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցում մի քարոզ կարդաց, որի մէջ կարճառօտ կերպով նկարագրեց թիւրքախաղաղակ հայերի անտանելի դրութիւնը: «Չը նայելով թիւրքաց բոլոր հարստահարութիւններին, ասաց եպիսկոպոսը, մենք կարողացանք պահպանել մեր լեզուն, կրօնը և ազգութիւնը»:

Ա.Լ.ԲԱՆՆԻՍԻՍ-ը մեզ գրում են: «Անցեալ 1877 թիւ սեպտեմբերից մինչև այսօր մեր աղքատիկ «Սահակ-Անուշեան ուսումնարանը փակված է և բացվելու յոյս չէ մնացել: Չը գիտենք ինչ եղաւ դպրոցի անախանձելի դրութեան մէջ գտնված փոքրիկ գումարը: Քաղաքիս ուսումնարանական մասը առհասարակ այլ ևս այն չէ, ինչ որ էր տեսուչ Սարգիս Բէշ-Նազարեանցի օրերով: Նրա հեռանալուց յետոյ ամեն բան քանդվեցաւ մեր ուսումնարաններում»:

Մեզ հաղորդում են Ա.Լ.ԲԱՆՆԻՍԻՍ-ը որ այնտեղի քաղաքային վարչութիւնը տնօրէնութիւն է արել քաղաքի գերեզմանատունը տեղափոխել և հեռացնել քաղաքից: Թղթակիցը կարծում է որ թէ ժողովրդի և թէ եկեղեցական դասի համար, մահաւանդ ձիւն և ցեխ ժամանակ շատ գիտաւ կը լինի, տեղի հեռաւորութեան պատճառով—մեռելների թաղման կարգի կատարելը:

«Моск. Вѣд.» լրագրի թղթակիցը ուսաց ՏԱՄԲՈՎ քաղաքից հաղորդում է որ ճիշտ գետը, որի ափերի վրա կառուցված է Տամբով դաւառական քաղաքը, կատարելապէս վարակված է, կամ աւելի լաւ է ասել թունաւորված է, և սպառնում է քաղաքի բնակիչներին էլ թունաւորել: Այս փաստը ճշմարիտ լինելու համար կարող են վկայել պօլիցմէյտերի ստորագրութեամբ տպագրված յայտարարութիւնները, որոնք ուղարկված են քաղաքի բոլոր տնտեսներին: Մեղադրում են քաղաքային վարչութեան անհոգութիւնը, որ անտարբերութեամբ նայում էր ինչպէս ձմեռը և ամառը գետը լցնում էին աղբով: «Այդ է մեր ցաւը, նկատում է թղթակիցը, որ ամենամահաւանջ և առօրեայ կարգիցնելը, ինչպէս մաքուր օդը, խտակ ջուրը, չոր գետինը և յարմար փողոցները մնում են մեղանում կա-

Պօլսի պատրիարքը, գուցէ անգլիական դեսպանի դրդելուց թելադրված, ներկայացրեց ազգային ժողովին մի ծրագիր, որով առաջարկում էր և հայերի համար խնդրել այն արտօնութիւններից մէկը, որ պիտի վայելէին սլաւոնական ցեղերը Բալկանի թերակղզու վրա: Ազգային ժողովը մերժեց պատրիարքի առաջարկութիւնը, յայտնի չէ ինչ հիմնաւոր փաստերով:

Որքան մեզ յայտնի է, ազգային ժողովը ի նկատի է ունեցել այն, թէ արևմտեան եւրոպական պետութիւնների իւրաքանչիւրը ար և էլ եւան հարց պատրուակով միայն իրանց սեփական շահերն են որոնում,—և որովհետեւ Հայաստանի ազատութիւնը որ և իցէ կերպով նրանց շահերը չէ չօգտւում, ուրեմն հայերի առաջարկութիւնը կը մնար առանց հետևանքի կազմելիք կոնֆէրենցիայի մէջ:

Մենք չենք խօսում, թէ որքան սխալ է այդ դատողութիւնը, միայն կասեմք, թէ Անգլիան կը ցանկանար Հայաստանը ազատ տեսնել, քան թէ նրան մի ուրիշ պետութեան հետ խառնված տեսնել,—մենք հարկաւոր չենք համարում նաեւ բացառել, թէ ինչ չա՛հ ունի Անգլիան,—բայց դիցուք թէ ուղիղ է ազգային ժողովը դատողութիւնը, որով նա մերժում է պատրիարքի ծրագիրը, միայն մի հարց առաջարկենք ինչ քը կորցնէր ազգային ժողովը, եթէ կազմվելիք կոնֆերենցիային մի հայկական խնդիր առաջարկէր:

Մեզ կը պատահականեն, թէ ազգային ժողովը

տարեալ անհոգութեան մէջ, իսկ ճաշեր սարքել, սիրողների ներկայացումներ և բալեր տալ,—այդ մեր բանն է: Սաղայատակի փողոցը, չը պղտորել գետը,—այդ մենք չենք կարող անել, այդ մեր բանը չէ»:

Մեր ընթերցողները արդէն գիտեն որ մի քանի ժամանակ արանից առաջ ՍՏԱՎՐՍՊՈԼԻ իգական գիմնալիայի մի աշակերտուհի սպանեց իրան ատրճառակի հարուածով: Անձնասպանութեան ճշմարիտ պատճառը ոչ ոքին յայտնի չէ: Պատմում են որ Ս. աշակերտուհին անձնասպանութեան նախընթաց օրը անբաւականութիւն ունեցաւ դասատան վերատեսչուհու հետ, որ նրան նկատեց թէ նրա նստելու ձևը դասատան մէջ կանոնին դէմ է: Աշակերտուհին ուշադրութիւն չը դարձրեց այդ խօսքերին և վարժուհին ստիպվեցաւ զանգառովել դպրոցի գլխաւորի պաշտօնը կատարողին (ինքն գլխաւորը հիւանդ էր): Այս վերջինի յորդորանքներին էլ աշակերտուհին անհնազանդ գտնվեցաւ, այնպէս որ օրիորդին յայտնեցին թէ ուսումնարանի մուտքը նրան արգելված է, մինչև որ գործը գիմնալիայի խորհրդարանում քննված կը լինի: Ի հարկէ այս հանգամանքը չէր կարող լինել օրիորդի անձնասպանութեան պատճառը: Պատմում են որ օրիորդ Ս. այնքան քաջութիւն ունեցաւ, որ իր չափերի վրա սրտի դիմաց երեք բողբակ նշանակեց, որտեղ և արձակեց ատրճառակը: Անձնասպանը թողեց մի նամակ, որի մէջ խնդրում է ոչ ոքին չը մեղադրել իր մահվան մասին:

ՍՂՆԱՂԻՑ ստացանք յօգուտ հայ դպրութեանների 10 բուրջ Աւետիք Մինասեան Մեծբերդաբնակից:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Կերմանական պարլամենտը սաստիկ զբաղված է կանցլէրի տեղապահներ զննելու հարցով: Կերմանական փոքր տէրութիւնների ներկայացուցիչները այդ հարցի մէջ վտանգ են նշմարում իրանց համար և սաստիկ ընդգիմանում են գերմանական կայսերութեան նոր միմիսները աւելցնելու առաջարկութեանը: Կերմանական սահմանադրութիւնը յատկացրած լինելով միմիստական իշխանութիւնը կանցլէրին և դաշնակցական ժողովին ուր ձայն ունեն գերմանական փոքր պետութիւնների ներկայացուցիչները, սրանք վախենում են որ առաջարկութեան համեմատ պատասխանատու նոր միմիսները ընտրված ժա-

ձայնը իր նպատակին չէր հասնի, և այնուհետև հայերը կը կորցնէին իրանց հաւատարմիմ հպատակութեան համարումը և կասկած չէր կը դառնային թիւրքերի աչքում: Մեզ կը պատասխանեն գուցէ մի աւելի ծայրադեղ բան, թէ թիւրքերը հայերին ապագամբ համարելով կը սկսէին նրանց կոտորել Կ. Պօլսի մէջ:

Հաւատարմիմ հպատակութիւնը մի այնպիսի պետութեան վերաբերութեամբ, որպէս թիւրքերն է, նշանակում է կորստ հնազանդութիւնը, այսինքն անտրտուն լինելու բռնակալ բուրբ բարբարոսութիւնները: Եւ հայերը մինչև ոչինչ չը չանցնէին, միայն ծանրացրին իրանց ստրկութեան շղթաները: Որովհետեւ բռնակալ պետութիւնները աւելի ակնածութիւն ունեն դէպի այն աղքատը, որոնք անհաւատարմիմ կամ կասկածաւոր են, և այսպիսիների ձայնը կտրելու համար միշտ աշխատում են գրաւել նրանց այս և այն պահանջները կատարելով: Իսկ հաւատարմիմների վրա նայում են որպէս մարթիւն զոհների վրա... Այս խօսքերը ապացուցանելու համար բաւական է օրինակ վեր առնել թիւրքալի յայտնիքին, որոնք միշտ կասկածելի են եղել կառավարութեան աչքում, և միշտ աւելի պատահաւոր են եղել քան թէ հայերը և միշտ առաջադէմ:

Իսկ ինչ որ վերաբերում է միւս հարցին, թէ գուցէ թիւրքերը դարմանալով կը կոտորէին հայերին,—նախ, այսպիսի բան պատահել չէր կա-

մանակ, միմիստական իշխանութիւնը կը կենտրոնանայ կանցլէրի և իր տեղապահների վրա և դաշնակցական ժողովը կամ փոքրիկ տէրութիւնները կը զրկվեն իրանց իրաւունքներից:

Այն պաշտօնները որոնց համար հարկաւոր եղած ժամանակ տեղապահ միմիսները զննել առաջարկված է, ծովային զործերի, արտաքին գործերի, Էլզաս-Լոտարինգիայի, փոստի և հեռագրիների, վերջապէս ֆինանսների միմիստութիւններն են, իսկ այլ միմիստութիւնների համար կանցլէր ինքն պատասխանատու կը մնայ միշտ և տեղապահներ չեն ընդունվի:

Ազգային ազատական կուսակցութիւնը պատրաստված էր առաջարկել որ կանցլէրի տեղապահներ մշտական լինեն և ոչ թէ կանցլէրի հիւանդացած կամ բացակայ եղած ժամանակ պաշտօն վարեն, ինչպէս ասում է առաջարկված օրէնքը: Բայց վերջին հեռագիրները յայտնում են որ ազատական կուսակցութիւնը որոշել է որ ոչ մի փոփոխութիւն չառաջարկէ կանցլէրի տեղապահներ ընտրելու օրէնքի ծրագրի մէջ: Սակայն Բալթիկայի նախագահ միմիստը, պ. Պրէտշներ սաստիկ բողբել է պատասխանատու նոր միմիսները հաստատելու առաջարկութեան դէմ: Այդ բողբը արել է դաշնակցական խորհրդի և դաշնակց կառավարութիւնների անունով: Նա ասել է թէ գերմանական սահմանադրութիւնը ճանաչում է միակ պատասխանատու միմիստին, կանցլէրին, իսկ ուրիշին չի ճանաչի: Մի նոր միմիստութիւն հաստատել նրան պաշտօններ և սահմանադրական պատասխանատուութիւն տալով, այդ նշանակում է ջնջել դաշնակցական Խորհուրդը և սպանել մասնաւոր տէրութիւնների ինքնավարութիւնը: Վերադառնալով միմիստ պ. Միտտնիստն էլ նոյն դաւադարն է յայտնել թէ կայսերութեան միմիստութիւն հաստատել չի համաձայնվի գերմանական տէրութիւնների սահմանադրական օրէնքներին և թէ այդ նոր օրէնքը կառավորի իշխանութիւնը բացարձակապէս կենտրոնացնելու:

Վերջապէս Բիսմարկ իշխանը մի երկար ձուռ խօսելով պաշտպանել է իր առաջարկած օրէնքը, ազդու խօսքերով պատասխանելով իր հակառակորդներին: Ժողովը որոշել է երկրորդ անգամ կարգաւ առաջարկված օրէնքի ծրագիրը և յետոյ վաւերացնել: Հաւանական է որ Բիսմարկ իշխանը այս անգամ էլ յաջողի իր սկսած գործի մէջ:

Պրանսիայի և Կերմանիայի լրագրիները հրա-

րող, քանի որ Անգլիայի հաւատարմը կանգնած է Կ. Պօլսի պարիսպների տակ ջրխառնեաններին մահմետականների բարբարոսութենից զերծ պահելու անունով: Բայց եթէ պատահէր ևս մի այդպիսի անցք, որ հայերին կարորէին,—նոյն իսկ կոտորածի միջոց կը բարձրանար նրանց ազատութիւնը, որովհետեւ առանց արեւելի, առանց զոհերի փրկութիւն չէ լինում...

Ուրեմն ժամանակ է, որ Կ. Պօլսի ազգային ժողովը իր պատրիարքի հետ գործէ մի վճռական քայլ, տարտամ երկմտութիւնը այսպիսի հանգամանքներում ոչինչ օգուտ չէ կարող բերել: Կոնֆերենցիան այսօր թէ վաղը կը կաղմվի, եթէ այս անգամ էլ չը յաջողվեցաւ բարձրացնել մի հայկական հարց, այնուհետեւ ճանկատանի հայերի ապագան պէտք է կորած համարել:

Դեռ ևս ուշ չէ: Բայց երկար յապաղումը կը կատարէ հայերի գլխին աւետարանական այն առակը, թէ «փեսան կը գայ պատրաստները կը մտնեն նրա հետ հարսանիքը» զրները կը փակվեն, յետոյ կը գան յիմար կոյսերը դուռը կը բաղիսն ու կասեն. «բան մեզ, տէր», իսկ նրանց կը պատասխանեն. — «Էմո՞ ճանաչում ձեզ»...

Վերջացնելով մեր յօդուածը, այդ հարցն ենք դնում.—միթէ ընդհանուր հայոց Վեհ. կաթողիկոսը պէտք է անտարբեր մնայ:

ՄԵԼԻՔԱՊԷ

տարակում են թէ Գերմանիան կը մասնակցի
Ֆրանսիոյ համաշխարհական արուեստահանդէսին
և գերմանացի արուեստագէտները աշ-
խատութիւններ կը ներկայանան գերա-
նուստներէ բաժնուով: Ինքը Վիլհելմ կայսրը
յայտնել է այդ որոշումը Ֆրանսիական գե-
պանին: Այդ լուրը մեծ գոհունակութիւն
պատճառած է թէ Բերլինում և թէ Փարի-
զում, ոչ թէ միայն այն օգուտներէ համար
որոնք թէ Ֆրանսիական արուեստահանդէսը
և թէ արուեստահանդէսին ներկայացող գեր-
մանացի արհեստագէտները կունենան, այլ
որովհետեւ դրա մէջ նշմարվում է Գերմանիայի
և Գերմանիայի մէջ խաղաղասիրական և բա-
րեկամական յարաբերութիւններէ յայտնի նը-
շանը: Այդ երկու տերութիւններէ մէջ երեւ-
ւեցած մոտաւորութիւնը և բարեկամութիւնը
այն րօպէին որ Ռուսաստանը իր դաշնակից
Գերմանիային շատ յարգանք է ցոյց տալի,
բոլորովին աննշան չէ լինի:

Ս Պ Ա Ն Ի Ա

Մարտի 14-ը գրում են հետեւեալը մարտի
1/13-ին Կուբա կղզու ապստամբութեան մա-
սին:

Այս երեկոյ կորստները ժողովից բաժան-
ված րօպէին, կարենէտի նախագահը մի հե-
ռադիր ստացաւ որը ուղարկված էր Ժովելար
և Մարտինէզ Կամպօս գեներալներէ: Հե-
ռադիրը հաղորդում է որ Պուերտօ-Պրինցի-
պէում ապստամբների զինուորները, կետրո-
նական մասնաժողովը, հազարից աւելի մար-
դիկ և շատ կանայք և տղաներ հնազանդվել
են մարշալ Կամպօսին, փետրվարի 16/28-ին:
Սանկտի-Սպիրիտուսում և նրա ամրանոցնե-
րում 800-ից աւելի ապստամբներ հնազանդ-
վել են, երկու թնդանոթ և շատ զենքեր
յանձնելով: Հաղորդակցութիւնները դժուար
լինելով, մանրամաս տեղեկութիւններ չեն հա-
սել ուրիշ նահանգներէ: այնու ամենայնիւ
ընդհանուր կառավարիչը հեռադրել է թէ
յոյս ունի որ նրանք էլ կը հնազանդվին շու-
տով: Կորտեսները մեծ ոգևորութեամբ լսեցին
այդ լուրերը և պ. Սաքաստա առաջարկեց
շնորհակալութեան քուէ տալ զորաբանակ-
ներին և իրանց հրամանատարներէ համար:
Կորտեսներին նախագահը, պ. Այալա, երեք
առաջարկութիւններ կայացրեց ժողովին որոնք
ընդունվեցան: Առաջինն էր կորտեսներին ժո-
ղովին իր զինանոթ միասին թագաւորի պա-
լատը գնալ նրան շնորհաւորելու համար այս
խաղաղութիւնը: Երկրորդը՝ շնորհակալութեան
քուէ տալ Կուբայի իշխանութիւնների և
զորքերի համար: Երրորդը՝ շնորհակալութիւն
յայտնել թէ նոր և թէ հին կառավարու-
թիւններին որոնք օգնեցին Կուբայում խաղա-
ղութեան հաստատվելուն: Կորտեսները իրանց
զինանի հետ գնացին Թագաւորի պալատը
ուր թագաւորը և թագուհին իրանց գեր-
դաստանից և իշխանութիւններից շնորհակալ-
ած շնորհք էին: Պ. Այալա գեպուտանների կող-
մից շնորհաւորեց Ալֆօնս XII-ին որ շատ
եռանդուն և ոգևորված կերպով պատասխան
տվեց: Թագաւորը դեռ նոր էր լսում այդ
լուրը որովհետեւ հեռագիրը ամենից առաջ
խորհրդարան էին տարել կարենէտի նախա-
գահին: Այս երեկոյ լուսավառութիւններ
եղան և կարենէտի նախագահ պ. Կանօվաս
դէլ Կաստիլիոյի ապարանքում փառաւոր ըն-
դունելութիւն եղաւ ուր կային շատ սենա-
տորներ, գեպուտաններ, գեպաններ և գե-
ներալներ որոնք եկել էին կարենէտի նախա-
գահին շնորհաւորելու: Պ. Կանօվաս կարգա-
նրանց մի հեռագիր մարշալ Կամպօսին ուղարկ-
ված որ բացարձակապէս մերժում էր իր հա-
մար որ և իցէ վարձատրութիւն:

Նիւ-Յորկից գրում են փետրվարի 5/17-ին:
Մի քանի օր է որ հեռագիրը ամեն առաւօտ
լուր է տալի Կուբայից թէ Համաշխարհ շքեղ
հանդէսներ են լինում Ալֆօնս XII-ի հար-

սանեաց պատուի համար: Չը գիտեմ թէ ինչ
այդ հանդէսները ունեցել են այդպիսի, որով-
հետեւ հարսանեկան հանդէսը անցեալ ամիս
կատարված է Սպանիայում: Ինչ էլ լինի ու-
շանալու պատճառը, սա յայտնի է որ ընդ-
հանուր կառավարիչ գեներալ Ժովելար աշ-
խատել է որ շատ փառաւոր լինեն այդ հա-
նդէսները և շատ փող է վատնել: Դառով ապա-
տամբներին, այժմ շատ հաւանական է որ
նրանք հնազանդվեն և այդ աջողվում է գե-
ներալ Մարտինէս Կամպօսի ճշմարիտ ազա-
տական քաղաքականութեան շնորհով: Կու-
բայի ապստամբներին կատարեալ և ընդհա-
նուր ներդրութիւն կը տրվի, և խոստացված
է որ քաղաքական մի նոր տեսակ վարչու-
թիւն կազմվի Պուերտօ-Պրինցիպին մէջ և մի քանի
վերանորոգութիւններ լինեն, որոնց ապստամբ-
ները պահանջում էին: Ապստամբների կազ-
մած վերջին խումբերի պարագլուխները որոնք
յոյնել էին այդպիսի կռուելուց յետոյ, մի մաս-
նաժողով կազմել են խաղաղութեան բանակ-
ցութիւններ սկսելու համար: Այս ապստամ-
բութիւնը սկսված էր 1868 թ-ի հոկտեմ-
բերին, ուրեմն տաս տարու չափ է որ շա-
րունակվում էր:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՍԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 22 փետրվ. 78

Հեռագիրն ձեռք բերած այն լուրը թէ ազգա-
յին ժողովին առաջարկվել է Հայաստանին ինք-
նավարութիւնը և նա մերժել է, սխալ է: Ազգային
ժողովին երբեք այդպիսի խնդիր ներկայացած չէ,
այլ միայն խառն ժողովին մէջ խօսուած է: Ահա
ձեզ կը նկարագրեմ այդ եղելութիւնը, համառօտ
բայց ստույգ տեղեկութիւններով:

Անցած տարի գեկտեմբերի 21-ին Ներսէս
պատրիարքը հրաժարական տուաւ. բայց ազ-
գային ժողովը նկատելով պարագայից ծանրու-
թիւնը, խնդրեց որ մի ամիս ևս վարէ իր պաշ-
տօնը: Այնուհետև գէպեքը այնպէս բերին որ
ոչ հրաժարականի խօսք եղաւ և ոչ ալ ազգային
ժողովը գումարվեցաւ: Գումար ամիսին սկիզբ-
ները յանկարծ մի օր պատրիարք սրբազանը կը
հրախիւն քաղաքական ժողովը և ընդարձակ մի
տեղեկագիր կը կարդայ, յորում ցոյց կը տայ թէ
ինք Օսմանեան կառավարութիւնէն պիտի խնդրէ
Հայաստանի համար մի տեսակ ինքնավարութիւն,
Լիբանանի կառավարութեան ձեռով: Քաղաքա-
կան ժողովին մէջ ի հարկէ դնալով փնտրեա-
նութիւններ կը բացվին այդ առաջարկութեան
առիթով: Ետեւ կորույթի մի շարքով յետաձգել
այդ հարցին վրա բացված փնտրանքները: Այդ
ժամանակ (յուլի 5/17-ին) Ազգային խորհը-
դարանը պիտի բացվէր և Օսմանեան հաւատար-
մատարները գնացած էին Կ. Պօլսէն ուստաց
բանակատեղը խաղաղութեան համար բանակ-
ցելու: Ուստի հարկ էր սպասել և տեսնել թէ
քաղաքականութիւնը ինչ ընթացք կունենայ:
Պատրիարքի այդ առաջարկութեան լուրը շու-
տով Կ. Պօլսոյ մէջ տարածուեցաւ և բաւական
յուզում պատճառեց. թեր և դէմ կարծիքներ
յայտնուեցան, մինչև անգամ ազգային լրագիր-
ներու մէջ վիճաբանութեան առարկայ դարձաւ.
Գնադատական խիստ յօգուածներ հրատարա-
կուեցան պատրիարքին արած այդ առաջարկու-
թեան դէմ և մինչև անգամ առարկեցին թէ
պատրիարքը որ գրեթէ հրաժարել էր համա-
րուի, ինչու կը միջամտէ այդպիսի գործոց:

Այժմ կուզեմ բացատրել ձեզ թէ ինչու մեծա-
գոյն մաս մը դժգոհ էր պատրիարքին ոչ թէ
առաջարկութեանէն, այլ այդ առաջարկութեան
ձեռն: Քաղաքական այդպիսի դարձումը մը մեծ
զաղոտնապահութիւն կը պահանջէ. արդ, ինչպէս
կը լինի որ իսկոյն տարածուեցաւ այդ լուրը ամ-
բողջ Կ. Պօլսոյ մէջ, Ուստի գնադական կարծիք-
ներ յառաջ եկան թէ Բ. Գուբը մաս ունի այդ
գործին մէջ և թէ մի խաղ է այդ որ կը խաղան
խաբելու համար հայերը որմէ պէտք է զգուշա-
նալ: Մենք այն կարծիքն ենք թէ պէտք է
ընել այդպիսի առաջարկութիւն մը, այնպէս
խորհելով որ, եթէ յաջողի, լաւ. իսկ թէ չա-
յողի, ինչ կորուստ արած կը լինենք: Այժմ, մեր
տեսութեան գլխաւոր առարկաներէն մին եղած
է Ռուսիայի քաղաքականութիւնը և մենք չընա-

հայեցութեամբ կուզենք օգուտ քաղել պարա-
գայնէն: Մինչև այժմ մեր ազգը շատ կորսն-
ցուց սխալ հայեցներով: Թիւրքիայի հայոց ամե-
նամեծ մասը համոզուած է թէ պէտք է զգու-
շանալ այնպիսի գրգռմանէ որոնց միակ նպա-
տակն է Թիւրքիայի հայերը խաբել և գործիք
անել միայն Ռուսիոյ քաղաքականութեան դէմ:
Շատերու բերան կը խօսուէր թէ Թիւրքաց կա-
ռավարութիւնը նկատելով որ Հայաստանի մէջ
մասը իւր ձեռքէն պիտի երթայ և բոլորովին
Ռուսիոյ պիտի անցնի, աւելի լաւ կը համարի
որ այդ երկրը Լիբանանու նման վարչական ձև
մը ունենայ և իւր գերիշխանութեան տակ լինի.
ուստի կը դրդէ հայերն որ այդպիսի պահանջում
մը չենեն: Արդ, եթէ որոշեմ է Ռուսիան որ պա-
տերազական ծախքի փոխարէն դրաւ Հայաս-
տանի մի մասը, մեր պահանջը ուրիշ նշանա-
կութիւն չունենար, բայց եթէ Ռուսիոյ քա-
ղաքականութեան դէմ շարժումներ անել: Ինչ
օգուտ կունենար այդ շարժումը, Հայաստան
ընդարձակ է. եթէ այդ առաջարկութիւնը ճշմա-
րիտ կուզեն ինքնավարութիւն տալ հայերուն,
թող Հայաստանի այն մասերուն համար կար-
գազրութիւն անեն զոր Ռուսիա չը պահանջէր
գրաւել: Ինչ որ կարող ենք անել, այդ պէտք է
որ պահանջենք և անենք և ոչ թէ անկարելի բա-
նեցու ձգտելով, կարելին ալ վտանգի ենթար-
կենք: Թէ Թիւրքիայի քրիստոնեաները ճիշտ
պէտք է գնահատեն այժմ Ռուսիայի պաշտպա-
նութիւնը և խնդրեն զայն, այդ մասին մենք
չենք խօսիր, որովհետև արդէն եղելութիւնները
կը խօսին: Մենք աւելի յոյս ունենք Ռուսիայի,
քան թէ ալ տէրութեան պաշտպանութեան վրա:
Երբ Ամէդ-Վէֆիկ-փաշան տէրութեան առա-
ջին պաշտօնեայ եղաւ, պատրիարքը անմիջա-
պէս գնաց այցելեց նա: Ամէդ-Վէֆիկ-փաշան
երկրորդ օրը փոխադարձ այցելութիւն եկաւ
սրբազան պատրիարքին: Պատրիարքը նկարա-
գրեց Հայաստանի գրութիւնը և իւր խնդիրքն
բնաւ (որչոյ չը գիտեմք թէ Հայաստանի որ մա-
սին համար): Փաշան խոստացաւ նկատողութեան
առնուլ: Բայց Թիւրքի խոստում է. նա դարձեալ
խաբեց:

Ահա խնդիրը այդ վիճակին մէջ մնացած է:
Ալ ազգային ժողովը չէ գումարված. պատրիարքի
հրաժարականի խնդիրն ալ յետ մնացած է: Իսկ
այստեղ կարծիքներն ինչ ալ լինին, ամենն ալ
կը ցանկան և կաշխատեն Հայաստանի բարեօր-
ման համար օգուտ քաղել քաղաքական այժմեան
ըրութեանէն: Լուրսեմք և խոսնելութեամբ կը
գործեն: Ամեն կուսակցութիւններ և լրագիրներ
միաբանած են այդ մասին. այժմ այստեղ ոչ
աշակոզման կուսակցութիւն կայ, ոչ ձախա-
կողմեան, ոչ կղերական և ոչ հակակղերական.
ամենուն ալ նշանաբանը եղած է հայութիւնը:
Հայրենիքի փրկութեան մեծ խնդիրն առջև ամեն
կիրքեր լուծած են:

Գերապատիւ Մատթէոս եպիսկոպոս իզմիր-
եանց Կ. Պօլսէն գնաց դէպի Ս. Եփմիածին, մի
քանի եկեղեցական գործերով: Գերապատիւ Խո-
րէն և... սրբազաններն ալ պիտի գնային
միասին, բայց որոշ չը գիտեմք թէ գնացին եթէ
ոչ նոքա յետ մնացին:

Թուականս մի քանի օր յառաջ՝ այն է փե-
տրվարի 4/16-ին սրբազան պատրիարքը գնաց
Սան-Ստեֆանօ, տեսնելուց Կոմ Իզմետիէվին
հետ և յետոյ ներկայացաւ Նիկիոյ մեծ դքսին
որ սիրալի կերպով ընդունեց: Որոշ չենք գի-
տեր թէ ինչ խօսուած է, բայց կասեն թէ հայոց
համար գոհացուցիչ խօսքեր եղած են և մեծ
դուքը խոստացեր է հայոց խնդիրն ալ նկատո-
ղութեան առնել: Կասեն թէ Սալֆէտ-փաշան
զիմարդի է պատրիարքին որ չը ներկայանայ
Նիկիոյ մեծ դքսին, բայց պատրիարքը չէ լսել
փաշային: (Այս լուրը ստուգուած կը կարօ-
տի): Իսկ յայնքու պատրիարքը դեռ չէ գնա-
ցած Նիկիոյ մեծ իշխանին մօտ:

Այժմ ամեն մարդ կիմանայ թէ իրաւունք ու-
նենք մերժել Ռուսիոյ դէմ գնահատագրութիւնը:
Դամանակաւ մեր պատրիարք, ժողովներ և հրա-
տարակներ ճիշտ անկեղծութեամբ պաշտպա-
նութիւն ցրին տաճկաց. աւելի լաւ կընէին, եթէ
լուր կենային: Արդ եթէ գնահատագրութեան խն-
դիրն ալ ընդունէինք, կարող էք երևակայել թէ
բաւականին երես պէտք էր ունենալ այժմ Նիկի-
ոյ մեծ իշխանին ներկայանալու և նորա պաշտ-
պանութիւնը խնդրելու համար: Թողունք մի կողմ
այդ քաղաքական տեսակետները. «Temps»-ի
Կ. Պօլսի թղթակիցը լաւ բացատրած էր թէ ինչ
էին այն ներքին պատճառներ որով Թիւրքիայի
հայեր մերժեցին գնահատագրութիւնը:
«Levant Herald» լրագիրը որ այստեղ կը հրա-
տարակի, հրատարակեց թէ խաղաղութեան

պայմաններուն մէջ գրուած է որ Հայաստանի
մէջ վարչական վերանորոգութիւններ պիտի լի-
նին Եւրօպական Թիւրքիայի նահանգներին մէջ
լինելու վերանորոգութիւններին նման:

Հ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրին Կորիւնից հեռագրում են
(մարտի 13-ից) հետեւեալը. «Թիւրքաց անկախ
զօրքերը Գէլլինի նահանգում 8 քրիստոնեայ
գիւղ քար ու քանդ արին, մի և նոյն ժամանակ
այնտեղ մնացած բոլոր տղամարդկերանց կոտո-
րեցին, իսկ կանանցը իրանց հետ վերցրին, Հաս-
տատ աղբիւրներէ խմանում ենք, որ սպանված
ների մարմինները խկոյն այրում էին, զոհերի
թիւը ծածկելու նպատակով: Թիւրքաց կանոնա-
ւոր զօրքերը, աւելի քան հարիւր կանայք և երե-
խաներ սպանեցին, նրանց մարմինները դեռ
ևս անվաճ են սպանման տեղը: Ապստամբների
առաջնորդ Լիկուրիօնը, Տրիտակի և Լայպի հետ
միասին պահվում են Բազում: Երկուշաբթի օր
Թիւրքերը յարձակվեցան նրանց վրա բայց ոչինչ
հետանք չունեցաւ այդ յարձակումը, որ վեց
օր շարունակվեց: Անգլիական կոնսուլը Բազում
նաւով ուղևորվեցաւ այնտեղ կատարված բար-
բարոտութիւնները քննութեան տակ զցելու
պատճառով:

«Times» լրագիրը քննելով այն անբաւակա-
նութիւնը, որ այժմ կայ Անգլիայի և Ռուսաս-
տանի մէջ ստում է. «Եւրօպայի պարտականու-
թիւնն է պահանջել, հաշտութեան դաշնագիրը
ամբողջութեամբ ներկայացնել կոնգրէսին: Ռու-
սաստանից չեն պահանջում, որ նա զիջում անէ
Անգլիային կամ Աւստրիային, այլ որ ընդունի
Եւրօպայի իշխանութիւնը և հաւատարիմ մնայ
1872 թականին ընդունած սկզբունքին»:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10հոկտ. 14/26 մարտի: «Morning Post»
լրագիրը պաշտօնապէս յայտնում է որ Ան-
գլիան արդարութեան վրա հիմնված դիրք է
ընդունել և չի թելոյ տայ, որ իրան յետ մը-
շին այդ դիրքից, Ռուսաստանը երևակայում
է, որ արեւելքը նրա ձեռքին է, բայց նա
նպատակ ունի այնպիսի բան ստանալ որ
արդէն Անգլիային է պատկանում և որ Ան-
գլիան առանց կռիւ գեղում չի անի:

ԲՐԻՒՍԷԼ, 14/26 մարտի: «Nord» լրագիրը
ստում է հետեւեալը. «Երկուսի ունենալով
Անգլիայի տրամադրութիւնը, շատ քիչ հա-
ւանական է, որ կոնգրէսը կայանայ: Եւ-
րօպայի համար աւելի օգտակար է որ կոն-
գրէսը չը կայանայ: Եւրօպան պէտք է կա-
տարէ իր պարտականութիւնը առանց Ան-
գլիայի մասնակցութեան»:

ԲՈՒՄԱՐՍԵՏ, 14/26 մարտի: Երեկ լուսմի-
նական ազգային ժողովը փակ նիստում Կա-
զնիստօ Կարապետ Ս. Պետրուրդում գը-
տնվող Բումինայի գործակալը զրուցութիւնը,
որտեղ ասված էր, թէ Գօրչակով իշխանը
յայտնեց գործակալին, որ Կայսր Ալեքսանդրը
Բեսարաբիայի Ռուսաստանին չը տալը անձ-
նական վերաւորանք է համարում: Այս յայ-
տնութիւնը խորը տպաւորութիւն ունեցաւ:
Երկրորդ փակ նիստ է նշանակած:

Կ. ՊՈԼԻՍ, 14/26 մարտի: Այստեղ եկաւ
Մեծ Իշխան Նիկողայայր և մի քանի գեներա-
լներին հետ շոգենաւի կայիկով ուղևորվեց
Իօմնա-Բախչէ, որտեղ Սուլթանը ընդունեց
նրան: Իսկոյն դրանից յետոյ Սուլթանը Մեծ
Իշխանին Բեզլեքեղում փոխ այցելութիւն
արեց: Յետոյ Կիւտաի հրամանատարը վերա-
դարձաւ Սան-Ստեֆանօ: Ռուսները Զօրկի
մօտ ամրացնում են իրանց զիջքերը: Բեզլե-
կան ծոցում գտնված անգլիական նաւա-
տորմը անդադար ստանում է պատերազմա-
կան պաշարեղէններ և ուտելիքներ: Ռուս-
ները կարողաւորեցին Բօզարայի բնակիչնե-
րից զենքը յետ առնել:

Կ. ՊՈԼԻՍ, 14/26 մարտի: «Новое Время»
լրագրին հեռագրում են Կ. Պօլսից, որ Բ.
Գուբը կարգադրեց զաղթած չեքքաներին և
արեւմտեկներին ուղարկել առաւ-հայոց նոր սահ-
մանը:

